ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ №102

«14» 11 2022թ. ք. Երևան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզի դատախազությունում 2022 թվականի 10 ամիսների ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում կատարելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգի 39-րդ կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Գեղարքունիքի մարզի դատախազությունում իրականացնել 2022 թվականի 10 ամիսների ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ստուգումն իրականացնելու համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով՝

Հանձնախմբի ղեկավար՝

Արմեն Մարուխյան – ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

Հանձնախմբի անդամներ՝

Միեր Մկրտչյան - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և

	իրավական ապահովման վարչության պետի տեղակալ
Հայկ Էյրամջյան -	ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ
Սամվել Հակոբյան -	ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ
Արամ Մաթևոսյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ
Էդգար Շահինյան -	ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
Գագիկ Աղասյան -	ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
Կարապետ Հակոբյան -	ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ:
Դավիթ Հարությունյան –	ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ
Տաթևիկ Խաչատրյան -	ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ
Վահան Հարությունյան -	ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ:

Թամարա Գևորգյան -	ՀՀ դատախազության առաջին բաժնի գլխավոր մասնագետ
Հայկ Սարգսյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող ու վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ

3. **Հանձնախմբի անդամներին՝** ստուգումն իրականացնել մինչև 2022թ. դեկտեմբերի 15-ը և արդյունքներով կազմված տեղեկանքը ներկայացնել հանձնախմբի ղեկավարին:

4. **Հանձնախմբի ղեկավարին՝** մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը ստուգման արդյունքներով կազմել ամփոփ տեղեկանք և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

5. Սույն հրամանի պատճենը տրամադրել Գեղարքունիքի մարզի դատախազին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

Ա.Վարդապետյան